# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
# ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆ

✉ ՀՀ Լոռու մարզ, քաղ. Վանաձոր, Մ. Գոշի 6 ☎(0322) 2-40-37

ԼԴ/0006/01/16, Ե 07 12156/16

« 30 » մայիսի 2016թ.

ՀՀ Լոռու մարզպետ,
պարոն՝ Ա.Նալբանդյանին
/Հասցե՝ քաղ. Վանաձոր, Հայքի հրապարակ/

Ուղարկվում է Նորայր Սարիբեկի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի թիվ ԼԴ/0006/01/16 քրեական գործով դատավճռի պատճեն:

Միաժամանակ հայտնվում է, որ Նորայր Սարիբեկի Սարգսյանը ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2016 թվականի ապրիլի 25-ի դատավճռով մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 38,311$^{1}$-րդ հոդվածի 1-ին մասով և 38,312$^{1}$-րդ հոդվածի 1-ին մասով:

ՀՀ քրեական օրենսգրքի 38,311$^{1}$-րդ հոդվածի 1-ին մասով դատապարտվել է տուգանքի Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200.000/երկու հարյուր հազար/ դրամի չափով:

ՀՀ քրեական օրենսգրքի 38,312$^{1}$-րդ հոդվածի 1-ին մասով դատապարտվել է տուգանքի Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200.000/երկու հարյուր հազար/ դրամի չափով:

ՀՀ քրեական օրենսգրքի 66 հոդվածի կարգով՝ պատիժները մասնակիորեն գումարելու սկզբունքով, ՀՀ քրեական օրենսգրքի 38,311$^{1}$-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված 200.000/երկու հարյուր հազար/ դրամի չափով տուգանքի ձևով պատժին մասնակիորեն գումարվել է ՀՀ քրեական օրենսգրքի 38,312$^{1}$-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված 200.000/երկու հարյուր հազար/ դրամ տուգանքից 100.000/մեկ հարյուր հազար/ դրամը և վերջնական պատիժ է սահմանվել տուգանք 300.000/երեք հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով:

ՀՀ քրեական օրենսգրքի 51 հոդվածի 3-րդ մասի կարգով՝ տուգանքի վճարումը տարաժամկետվել և վճարման համար սահմանվել է 10 /տաս/ ամիս ժամանակ, յուրաքանչյուր ամիս բռնագանձելով 30.000 /երեսուն հազար/ ՀՀ դրամի չափով:

Խափանման միջոցը՝ ստորագրություն չհեռանալու մասին, թողնվել է անփոփոխ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Լոռու մարզի Դեբետ համայնքի համայնքապետարանի երկրորդ կարգի մասնագետ Նորայր Սարիբեկի Սարգսյանի պաշտոնավարությունը ժամանակավորապես դադարեցնելը վերացվել է:

Քրեական գործով վերաքննիչ բողոք չի ներկայացվել և դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ 2016թվականի մայիսի 26-ին:

Խնդրվում է համձնարարել կատարել դատական ակտի պահանջները և արդյունքների մասին տեղյակ պահել դատարանին:

Դատավոր Մ. Հարությունյան

Գործ թիվ ԼԴ/0006/01/16

# Դ Ա Տ Ա Վ Ճ Ի Ռ

## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը հետևյալ կազմով՝

| | |
|---|---|
| Նախագահող-դատավոր | Մ.Հարությունյան |
| Քարտուղար | Ռ.Թամարյան |
| Մեղադրող-դատախազ | Գ.Աջամյան |
| Ամբաստանյալ Գ.Գալստյանի շահերի պաշտպան | Կ.Թումանյան |
| Ամբաստանյալ Ն.Սարգսյանի շահերի պաշտպան | Վ.Սուղյան |
| Ամբաստանյալներ՝ Ա.Սարգսյանի, Պ.Մատինյանի, Ե.Կիրակոսյանի, Գ.Մատինյանի, Ա.Մանուկյանի, Լ.Հովսեփյանի, Ք.Խառատյանի, Ա.Ավետիքյանի շահերի պաշտպան | Ա.Սուքիասյան |

2016թ. ապրիլի 25-ին, Վանաձոր քաղաքում, դռնբաց դատական նիստում, արագացված դատական քննության կարգով քննեց գործն ըստ մեղադրանքի՝

Գարիկ Վռամի Գալստյանի՝ ծնված 1985 թվականի մարտի 18-ին, Ստեփանավան քաղաքում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, բարձրագույն կրթությամբ, ամուսնացած, խնամքին է գտնվում 21.09.2013թվականին ծնված տղան՝ Էրիկ Գարիկի Գալստյանը, չդատված, վաշտառողջ է, վերջինիս մոտ ախտորոշվել է պարբերական հիվանդություն, երրորդ խմբի հաշմանդամ, աշխատում է սոցիալական աջակցության Վանաձորի տարածքային բաժնում՝ որպես առաջատար մասնագետ, հասցեն՝ քաղաք Վանաձոր, Դպրոցի 52/2, 2015թվականի նոյեմբերի 26-ից մինչև 2015թվականի նոյեմբերի 29-ը գտնվել է արգելանքի տակ, մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի $311^{1}$-րդ հոդվածի 1-ին մասով,

Նորայր Սարիբեկի Սարգսյանի՝ ծնված 1966թվականի հունվարի 03-ին, Լոռու մարզի Դեբետ գյուղում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, միջնակարգ կրթությամբ, ամուսնացած, աշխատում է Լոռու մարզի Դեբետ համայնքի գյուղապետարանում՝ որպես երկրորդ կարգի մասնագետ, ԵԿՄ անդամ է, չդատված, հասցեն՝ Լոռու մարզ, գյուղ Դեբետ, 9-րդ փողոց, տուն 16, խափանման միջոց է ընտրվել ,,Ստորագրություն չհեռանալու մասին", մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 38,$311^{1}$-րդ հոդվածի 1-ին մասով և 38,$312^{1}$-րդ հոդվածի 1-ին մասով,

Արմինե Վաչագանի Սարգսյանի՝ ծնված 1985թվականի հունվարի 06-ին, Ստեփանավան քաղաքում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, ութամյա կրթությամբ, ամուսնացած, խնամքին՝ 22.05.2009թ. ծնված տղան՝ Ռոման Ռաֆայելի Գուլյանը, չի աշխատում, չդատված, հասցեն՝ Լոռու մարզ գյուղ Դեբետ, 2-րդ փողոց, 3-րդ նրբանցք, տուն 3, խափանման միջոց է ընտրվել ,,Ստորագրություն չհեռանալու մասին", մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի $312^{1}$-րդ հոդվածի 1-ին մասով,

Պարույր Ռուբենի Մատինյանի՝ ծնված1979 թվականի նոյեմբերի 24-ին, Լոռու մարզի Դեբետ գյուղում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, միջնակարգ կրթությամբ, ամուսնացած, խնամքին երկու տղաները՝ 22.02.2005թ. ծնված Սևակ Պարույրի Մատինյանը և 19.02.2008թ. ծնված Նարեկ Պարույրի Մատինյանը, չի աշխատում, չդատված, հասցեն՝ Լոռու մարզ, գյուղ

Դեբետ, խափանման միջոց է ընտրվել ,,Ստորագրություն չհեռանալու մասին", մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի $312^{1}$-րդ հոդվածի 1-ին մասով,

Երեմ Արարատի Կիրակոսյանի՝ ծնված 1974 թվականի նոյեմբերի 25-ին, Վանաձոր քաղաքում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, միջնակարգ կրթությամբ, ամուսնացած, խնամքին՝ 25.11.1998թ. ծնված աղջիկը՝ Մելինե Երեմի Կիրակոսյանը և 08.06.2001թ. ծնված տղան՝ Արարատ Երեմի Կիրակոսյանը, չի աշխատում, չդատված, հասցեն՝ Լոռու մարզ գյուղ Դեբետ, 6-րդ փողոց, տուն 25, խափանման միջոց է ընտրվել ,,Ստորագրություն չհեռանալու մասին", մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի $312^{1}$-րդ հոդվածի 1-ին մասով,

Գևորգ Գառնիկի Մատինյանի՝ ծնված 1973 թվականի հունվարի 30-ին, Լոռու մարզի Դեբետ գյուղում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, միջնակարգ կրթությամբ, ամուսնացած, խնամքին երկու տղաները՝ 30.09.1998թ. ծնված Նվեր Գևորգի Մատինյանը և 08.01.2001թ. ծնված Գառնիկ Գևորգի Մատինյանը, չի աշխատում, չդատված, հասցեն՝ Լոռու մարզ, գյուղ Դեբետ, խափանման միջոց է ընտրվել ,,Ստորագրություն չհեռանալու մասին", մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի $312^{1}$-րդ հոդվածի 1-ին մասով,

Աղունիկ Վաղինակի Մանուկյանի՝ ծնված 1938 թվականի հոկտեմբերի 15-ին, Լոռու մարզի Եղեգնուտ գյուղում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, 7-ամյա կրթությամբ, այրի, չի աշխատում, վաստառողջ է՝ գերձայնային ախտորոշումով խորհուրդ է տրվել դինամիկ հսկողություն, չդատված, հասցեն՝ Լոռու մարզ, գյուղ Դեբետ, խափանման միջոց է ընտրվել ,,Ստորագրություն չհեռանալու մասին", մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի $312^{1}$-րդ հոդվածի 1-ին մասով,

Լյուդմիլա Սարգսի Հովսեփյանի՝ ծնված 1974 թվականի սեպտեմբերի 19-ին, Լոռու մարզի Դսեղ գյուղում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, միջնակարգ կրթությամբ, ամուսնացած, խնամքին՝ 18.08.2000թ. ծնված աղջիկը՝ Սիրանուշ Կորյունի Նազլուխանյանը, չի աշխատում, չդատված, հասցեն՝Լոռու մարզ, գյուղ Դեբետ, 6-րդ փողոց, 38 տուն, խափանման միջոց է ընտրվել ,,Ստորագրություն չհեռանալու մասին", մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի $312^{1}$-րդ հոդվածի 1-ին մասով,

Քնքուշ Սերյոժայի Խառատյանի՝ ծնված 1962թվականի հունվարի 03-ին, Լոռու մարզի Դսեղ գյուղում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, միջնակարգ կրթությամբ, ամուսնացած, չի աշխատում, չդատված, հասցեն՝ Լոռու մարզ գյուղ, Դեբետ 5-րդ փողոց, տուն 31, խափանման միջոց է ընտրվել ,,Ստորագրություն չհեռանալու մասին", մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի $312^{1}$-րդ հոդվածի 1-ին մասով,

Ալինա Ժիրիկի Ավետիքյանի՝ ծնված 1979 թվականի հունվարի 30-ին, Վանաձոր քաղաքում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, միջնակարգ կրթությամբ, ամուսնացած, խնամքին՝ 04.03.2002թ. ծնված տղան՝ Սեյրան Հովիկի Կիրակոսյանը և 02.06.2005թ. ծնված աղջիկը՝ Սյուզի Հովիկի Կիրակոսյանը, չի աշխատում, չդատված, հասցեն՝ Լոռու մարզ, գյուղ Դեբետ 5-րդ փողոց, 23 տուն, խափանման միջոց է ընտրվել ,,Ստորագրություն չհեռանալու մասին", մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի $312^{1}$-րդ հոդվածի 1-ին մասով.

Գործով ձեռք բերված ապացույցներով պարզվել է հետևյալը.

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Տ.Թաղևոսյանն ուսումնասիրելով Արմեն Սարգսյանի և Նորայր Սարգսյանի հաղորդումների վերաբերյալ նախապատրաստված նյութերը, 2015թվականի նոյեմբերի 25-ին որոշում է կայացրել պաշտոնեական կեղծիք կատարելու և Վանաձորի սոցիալական ծառայության պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից զգալի չափերով ապօրինի վարձատրություն ստանալու դեպքի առթիվ հարուցել քրեական գործ՝ ՀՀ քրեական

օրենսգրքի 311¹-րդ հոդվածի 1-ին մասով և 314 հոդվածի 1-ին մասով, քրեական գործն ընդունել վարույթ և կատարել նախաքննություն:

2015թվականի նոյեմբերի 25-ի որոշմամբ Նորայր Սարիբեկի Սարգսյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է ստորագրություն չհեռանալու մասին:

Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2015թվականի նոյեմբերի 29-ի որոշմամբ մեղադրյալ Գարիկ Վռամի Գալստյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանավորում 2 /երկու/ ամիս ժամանակով՝ կալանքի սկիզբը հաշվելով 2015թվականի նոյեմբերի 26-ից:

Նույն որոշմամբ մեղադրյալ Գարիկ Վռամի Գալստյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը փոխարինվել է գրավով՝ գրավի գումարի չափ է սահմանվել 1.000.000 դրամ:

2015թվականի դեկտեմբերի 01-ին որոշում է կայացվել Նորայր Սարիբեկի Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38,311¹-րդ հոդվածի 1-ին մասով և 325-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Տ.Թաղևոսյանը 2016թվականի մարտի 09-ին որոշում է կայացրել թիվ 33104715 քրեական գործի նյութերով պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայող Գարիկ Գալստյանին ապօրինի վարձատրություն տալու դեպքի առթիվ հարուցել նոր քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 312¹-րդ հոդվածի 1-ին մասով, այն առանձնացնել առանձին վարույթում ըստ ցուցակի և շնորհել 33101416 համարը:

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Տ.Թաղևոսյանը 2016թվականի մարտի 09-ին որոշում է կայացրել թիվ 33104715 քրեական գործի նյութերով պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայող Գարիկ Գալստյանին ապօրինի վարձատրություն տալու դեպքի առթիվ հարուցել նոր քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 312¹-րդ հոդվածի 1-ին մասով, այն առանձնացնել առանձին վարույթում ըստ ցուցակի և շնորհել 33101516 համարը:

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Տ.Թաղևոսյանը 2016թվականի մարտի 09-ին որոշում է կայացրել թիվ 33104715 քրեական գործի նյութերով պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայող Գարիկ Գալստյանին ապօրինի վարձատրություն տալու դեպքի առթիվ հարուցել նոր քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 312¹-րդ հոդվածի 1-ին մասով, այն առանձնացնել առանձին վարույթում ըստ ցուցակի և շնորհել 33101616 համարը:

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Տ.Թաղևոսյանը 2016թվականի մարտի 09-ին որոշում է կայացրել թիվ 33104715 քրեական գործի նյութերով պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայող Գարիկ Գալստյանին ապօրինի վարձատրություն տալու դեպքի առթիվ հարուցել նոր քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 312¹-րդ հոդվածի 1-ին մասով, այն առանձնացնել առանձին վարույթում ըստ ցուցակի և շնորհել 33101716 համարը:

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Տ.Թաղևոսյանը 2016թվականի մարտի 09-ին որոշում է կայացրել թիվ 33104715 քրեական գործի նյութերով պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայող Գարիկ Գալստյանին ապօրինի վարձատրություն տալու դեպքի առթիվ հարուցել նոր քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 312¹-րդ հոդվածի 1-ին մասով, այն առանձնացնել առանձին վարույթում ըստ ցուցակի և շնորհել 33101816 համարը:

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Տ.Թաղևոսյանը 2016թվականի մարտի 09-ին որոշում է կայացրել թիվ 33104715 քրեական

գործի նյութերով պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայող Գարիկ Գալստյանին ապօրինի վարձատրություն տալու դեպքի առթիվ հարուցել նոր քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 312¹-րդ հոդվածի 1-ին մասով, այն առանձնացնել առանձին վարույթում ըստ ցուցակի և շնորհել 33101916 համարը:

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Տ.Թադևոսյանը 2016թվականի մարտի 09-ին որոշում է կայացրել թիվ 33104715 քրեական գործի նյութերով պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայող Գարիկ Գալստյանին ապօրինի վարձատրություն տալու դեպքի առթիվ հարուցել նոր քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 312¹-րդ հոդվածի 1-ին մասով, այն առանձնացնել առանձին վարույթում ըստ ցուցակի և շնորհել 33102016 համարը:

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Տ.Թադևոսյանը 2016թվականի մարտի 09-ին որոշում է կայացրել թիվ 33104715 քրեական գործի նյութերով պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայող Գարիկ Գալստյանին ապօրինի վարձատրություն տալու դեպքի առթիվ հարուցել նոր քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 312¹-րդ հոդվածի 1-ին մասով, այն առանձնացնել առանձին վարույթում ըստ ցուցակի և շնորհել 33102116 համարը:

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Տ.Թադևոսյանը 2016թվականի մարտի 09-ին որոշում է կայացրել թիվ 33104715 քրեական գործի նյութերով պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայող Գարիկ Գալստյանին ապօրինի վարձատրություն տալու դեպքի առթիվ հարուցել նոր քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 312¹-րդ հոդվածի 1-ին մասով, այն առանձնացնել առանձին վարույթում ըստ ցուցակի և շնորհել 33102216 համարը:

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Տ.Թադևոսյանը 2016թվականի մարտի 09-ին որոշում է կայացրել թիվ 33104715 և 33101416 քրեական գործերը միացնել մեկ վարույթում և նախաքննությունը շարունակել թիվ 33104715 համարով:

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Տ.Թադևոսյանը 2016թվականի մարտի 09-ին որոշում է կայացրել թիվ 33104715 և 33101516 քրեական գործերը միացնել մեկ վարույթում և նախաքննությունը շարունակել թիվ 33104715 համարով:

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Տ.Թադևոսյանը 2016թվականի մարտի 09-ին որոշում է կայացրել թիվ 33104715 և 33101616 քրեական գործերը միացնել մեկ վարույթում և նախաքննությունը շարունակել թիվ 33104715 համարով:

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Տ.Թադևոսյանը 2016թվականի մարտի 09-ին որոշում է կայացրել թիվ 33104715 և 33101716 քրեական գործերը միացնել մեկ վարույթում և նախաքննությունը շարունակել թիվ 33104715 համարով:

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Տ.Թադևոսյանը 2016թվականի մարտի 09-ին որոշում է կայացրել թիվ 33104715 և 33101816 քրեական գործերը միացնել մեկ վարույթում և նախաքննությունը շարունակել թիվ 33104715 համարով:

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Տ.Թադևոսյանը 2016թվականի մարտի 09-ին որոշում է կայացրել թիվ 33104715 և 33101916 քրեական գործերը միացնել մեկ վարույթում և նախաքննությունը շարունակել թիվ 33104715 համարով:

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Տ.Թադևոսյանը 2016թվականի մարտի 09-ին որոշում է կայացրել թիվ 33104715 և 33102016 քրեական գործերը միացնել մեկ վարույթում և նախաքննությունը շարունակել թիվ 33104715 համարով:

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Տ.Թադևոսյանը 2016թվականի մարտի 09-ին որոշում է կայացրել թիվ 33104715 և 33102116 քրեական գործերը միացնել մեկ վարույթում և նախաքննությունը շարունակել թիվ 33104715 համարով:

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Տ.Թադևոսյանը 2016թվականի մարտի 09-ին որոշում է կայացրել թիվ 33104715 և 33102216 քրեական գործերը միացնել մեկ վարույթում և նախաքննությունը շարունակել թիվ 33104715 համարով:

2016թվականի մարտի 12-ին որոշում է կայացվել <u>Գևորգ Գառնիկի Մատինյանին</u> ՀՀ քրեական օրենսգրքի 312[1]-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին այն բանի համար, որ նա սոցիալական աջակցության Վանաձորի տարածքային բաժնի առաջատար մասնագետ՝ պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայող Գարիկ Գալստյանի կողմից նրա լիազորությունների շրջանակում իր ընտանիքին ՀՀ կառավարության 2014թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշմամբ սահմանված ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառելու՝ փաստագրելու և նպաստ ստանալու համար 2015 թվականի գարնանը, Լոռու մարզի Դեբետ գյուղում նույն գյուղի համայնքապետարանի երկրորդ կարգի մասնագետ Նորայր Սարգսյանի առաջարկությամբ, վերջինիս հետ եկել է հանցավոր համաձայնության՝ նրա միջոցով Գարիկ Գալստյանին ապօրինի վարձատրություն տալու շուրջ:

Դրանից հետո՝ 2015 թվականի հուլիսին, Գևորգ Մատինյանը Նորայր Սարգսյանի միջոցով Վանաձոր քաղաքում Գարիկ Գալստյանին որպես ապօրինի վարձատրություն տվել է 28.000 ՀՀ դրամ գումար, իսկ 2015 թվականի հոկտեմբերին՝ կրկին Նորայր Սարգսյանի միջոցով, Վանաձոր քաղաքում ցանկացել է Գարիկ Գալստյանին որպես ապօրինի վարձատրություն փոխանցել 28.000 ՀՀ դրամ գումար, սակայն Գարիկ Գալստյանը կամովին հրաժարվել է վերցնել այն:

2016թվականի մարտի 12-ի որոշմամբ <u>Գևորգ Գառնիկի Մատինյանի</u> նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է ստորագրություն չհեռանալու մասին:

2016թվականի մարտի 12-ին որոշում է կայացվել <u>Պարույր Ռուբենի Մատինյանին</u> ՀՀ քրեական օրենսգրքի 312[1]-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին այն բանի համար, որ նա սոցիալական աջակցության Վանաձորի տարածքային բաժնի առաջատար մասնագետ՝ պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայող Գարիկ Գալստյանի կողմից նրա լիազորությունների շրջանակում իր ընտանիքին ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշմամբ սահմանված ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառելու՝ փաստագրելու և նպաստ ստանալու համար 2015 թվականի գարնանը, Լոռու մարզի Դեբետ գյուղում, նույն գյուղի համայնքապետարանի երկրորդ կարգի մասնագետ Նորայր Սարգսյանի առաջարկությամբ, վերջինիս հետ եկել է հանցավոր համաձայնության՝ նրա միջոցով Գարիկ Գալստյանին ապօրինի վարձատրություն տալու շուրջ:

Դրանից հետո՝ 2015 թվականի հուլիսին, Պարույր Մատինյանը Նորայր Սարգսյանի միջոցով Վանաձոր քաղաքում Գարիկ Գալստյանին որպես ապօրինի վարձատրություն տվել է 56.000 ՀՀ դրամ գումար, իսկ 2015 թվականի հոկտեմբերին՝ կրկին Նորայր Սարգսյանի միջոցով, Վանաձոր քաղաքում ցանկացել է Գարիկ Գալստյանին որպես

ապօրինի վարձատրություն փոխանցել 28.000 ՀՀ դրամ գումար, սակայն Գարիկ Գալստյանը կամավոր հրաժարվել է վերցնել այն:

2016թվականի մարտի 12-ի որոշմամբ Պարույր Ռուբենի Մատինյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է ստորագրություն չհեռանալու մասին:

2016թվականի մարտի 12-ին որոշում է կայացվել Երեմ Արարատի Կիրակոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 312[1]-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին այն բանի համար, որ նա սոցիալական աջակցության Վանաձորի տարածքային բաժնի առաջատար մասնագետ՝ պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայող Գարիկ Գալստյանի կողմից նրա լիազորությունների շրջանակում իր ընտանիքին ՀՀ կառավարության 2014թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշմամբ սահմանված ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառելու՝ փաստագրելու և նպաստ ստանալու համար 2015 թվականի գարնանը, Լոռու մարզի Դեբետ գյուղում նույն գյուղի համայնքապետարանի երկրորդ կարգի մասնագետ Նորայր Սարգսյանի առաջարկությամբ, վերջինիս հետ եկել է հանցավոր համաձայնության՝ նրա միջոցով Գարիկ Գալստյանին ապօրինի վարձատրություն տալու շուրջ:

Դրանից հետո՝ 2015 թվականի հուլիսին, Երեմ Կիրակոսյանը Նորայր Սարգսյանի միջոցով Վանաձոր քաղաքում Գարիկ Գալստյանին որպես ապօրինի վարձատրություն տվել է 27.000 ՀՀ դրամ գումար:

2016թվականի մարտի 12-ի որոշմամբ Երեմ Արարատի Կիրակոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է ստորագրություն չհեռանալու մասին:

2016թվականի մարտի 12-ին որոշում է կայացվել Քնքուշ Սերյոժայի Խառատյանին ՀՀ քրեական օրենսգրքի 312[1]-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին այն բանի համար, որ նա սոցիալական աջակցության Վանաձորի տարածքային բաժնի առաջատար մասնագետ՝ պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայող Գարիկ Գալստյանի կողմից նրա լիազորությունների շրջանակում իր ընտանիքին ՀՀ կառավարության 2014թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշմամբ սահմանված ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառելու՝ փաստագրելու և նպաստ ստանալու համար 2014թվականի դեկտեմբերին, Լոռու մարզի Դեբետ գյուղում նույն գյուղի համայնքապետարանի երկրորդ կարգի մասնագետ Նորայր Սարգսյանի առաջարկությամբ, վերջինիս հետ եկել է հանցավոր համաձայնության՝ նրա միջոցով Գարիկ Գալստյանին ապօրինի վարձատրություն տալու շուրջ:

Դրանից հետո՝ 2015 թվականի հուլիսին, Քնքուշ Խառատյանը Նորայր Սարգսյանի միջոցով Վանաձոր քաղաքում Գարիկ Գալստյանին որպես ապօրինի վարձատրություն տվել է 16.000 ՀՀ դրամ գումար:

2016թվականի մարտի 12-ի որոշմամբ Քնքուշ Սերյոժայի Խառատյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է ստորագրություն չհեռանալու մասին:

2016թվականի մարտի 12-ին որոշում է կայացվել Աղունիկ Վաղինակի Մանուկյանին ՀՀ քրեական օրենսգրքի 312[1]-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին այն բանի համար, որ նա սոցիալական աջակցության Վանաձորի տարածքային բաժնի առաջատար մասնագետ՝ պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայող Գարիկ Գալստյանի կողմից նրա լիազորությունների շրջանակում իրեն ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշմամբ սահմանված ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառելու՝ փաստագրելու և նպաստ ստանալու համար 2015 թվականի գարնանը, Լոռու մարզի Դեբետ գյուղում նույն գյուղի համայնքապետարանի երկրորդ կարգի մասնագետ Նորայր Սարգսյանի առաջարկությամբ, վերջինիս հետ եկել է

հանցավոր համաձայնության՝ նրա միջոցով Գարիկ Գալստյանին ապօրինի վարձատրություն տալու շուրջ:

Դրանից հետո՝ 2015 թվականի հուլիսին, Աղունիկ Մանուկյանը Նորայր Սարգսյանի միջոցով Վանաձոր քաղաքում Գարիկ Գալստյանին որպես ապօրինի վարձատրություն տվել է 17.000 ՀՀ դրամ գումար, իսկ 2015 թվականի հոկտեմբերին՝ կրկին Նորայր Սարգսյանի միջոցով, Վանաձոր քաղաքում ցանկացել է Գարիկ Գալստյանին որպես ապօրինի վարձատրություն փոխանցել 17.000 ՀՀ դրամ գումար, սակայն Գարիկ Գալստյանը կամավոր հրաժարվել է վերցնել այն:

2016թվականի մարտի 12-ի որոշմամբ Աղունիկ Վաղինակի Մանուկյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է ստորագրություն չհեռանալու մասին:

2016թվականի մարտի 12-ին որոշում է կայացվել Արմինե Վաչագանի Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 312[1]-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին այն բանի համար, որ նա սոցիալական աջակցության Վանաձորի տարածքային բաժնի առաջատար մասնագետ՝ պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայող Գարիկ Գալստյանի կողմից նրա լիազորությունների շրջանակում իր ընտանիքին ՀՀ կառավարության 2014թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշմամբ սահմանված ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառելու՝ փաստագրելու և նպաստ ստանալու համար 2015թվականի գարնանը, Լոռու մարզի Դեբետ գյուղում նույն գյուղի համայնքապետարանի երկրորդ կարգի մասնագետ Նորայր Սարգսյանի առաջարկությամբ, վերջինիս հետ եկել է հանցավոր համաձայնության՝ նրա միջոցով Գարիկ Գալստյանին ապօրինի վարձատրություն տալու շուրջ:

Դրանից հետո՝ 2015 թվականի հուլիսին, Արմինե Սարգսյանը Նորայր Սարգսյանի միջոցով Վանաձոր քաղաքում Գարիկ Գալստյանին որպես ապօրինի վարձատրություն տվել է 22.000 ՀՀ դրամ գումար:

2016թվականի մարտի 12-ի որոշմամբ Արմինե Վաչագանի Սարգսյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է ստորագրություն չհեռանալու մասին:

2016թվականի մարտի 12-ին որոշում է կայացվել Լյուդմիլա Սարգսի Հովսեփյանին ՀՀ քրեական օրենսգրքի 312[1]-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին այն բանի համար, որ նա սոցիալական աջակցության Վանաձորի տարածքային բաժնի առաջատար մասնագետ՝ պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայող Գարիկ Գալստյանի կողմից նրա լիազորությունների շրջանակում իր ընտանիքին ՀՀ կառավարության 2014թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշմամբ սահմանված ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառելու՝ փաստագրելու և նպաստ ստանալու համար, 2015թվականի գարնանը, Լոռու մարզի Դեբետ գյուղում նույն գյուղի համայնքապետարանի երկրորդ կարգի մասնագետ Նորայր Սարգսյանի առաջարկությամբ, վերջինիս հետ եկել է հանցավոր համաձայնության՝ նրա միջոցով Գարիկ Գալստյանին ապօրինի վարձատրություն տալու շուրջ:

Դրանից հետո՝ 2015 թվականի հոկտեմբերին՝ Լյուդմիլա Հովսեփյանը Նորայր Սարգսյանի միջոցով, Վանաձոր քաղաքում ցանկացել է Գարիկ Գալստյանին որպես ապօրինի վարձատրություն փոխանցել 22.500 ՀՀ դրամ գումար, սակայն Գարիկ Գալստյանը կամավոր հրաժարվել է վերցնել այն:

2016թվականի մարտի 12-ի որոշմամբ Լյուդմիլա Սարգսի Հովսեփյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է ստորագրություն չհեռանալու մասին:

2016թվականի մարտի 12-ին որոշում է կայացվել Ալինա Ժիրիկի Ավետիքյանին ՀՀ քրեական օրենսգրքի 312[1]-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին այն բանի համար, որ նա սոցիալական աջակցության Վանաձորի տարածքային բաժնի

առաջատար մասնագետ՝ պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայող Գարիկ Գալստյանի կողմից նրա լիազորությունների շրջանակում իր ընտանիքին ՀՀ կառավարության 2014թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշմամբ սահմանված ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառելու՝ փաստագրելու և նպաստ ստանալու համար 2015թվականի գարնանը, Լոռու մարզի Դեբետ գյուղում նույն գյուղի համայնքապետարանի երկրորդ կարգի մասնագետ Նորայր Սարգսյանի առաջարկությամբ, վերջինիս հետ եկել է հանցավոր համաձայնության՝ նրա միջոցով Գարիկ Գալստյանին ապօրինի վարձատրություն տալու շուրջ:

Դրանից հետո՝ 2015 թվականի հոկտեմբերին՝ Ալինա Ավետիքյանը Նորայր Սարգսյանի միջոցով, Վանաձոր քաղաքում ցանկացել է Գարիկ Գալստյանին որպես ապօրինի վարձատրություն փոխանցել 54.000 ՀՀ դրամ գումար, սակայն Գարիկ Գալստյանը կամավոր հրաժարվել է վերցնել այն:

2016թվականի մարտի 12-ի որոշմամբ Ալինա Ժիրիկի Ավետիքյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է ստորագրություն չհեռանալու մասին:

2016թվականի մարտի 15-ին որոշում է կայացվել Գարիկ Վռամի Գալստյանին ՀՀ քրեական օրենսգրքի 311[1]-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին, այն բանի համար, որ նա Վանաձորի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի 2014թվականի մայիսի 8-ի թիվ 88-Ա հրամանով աշխատելով սոցիալական աջակցության Վանաձորի տարածքային բաժնի առաջատար մասնագետ՝ պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայող, սոցիալական աջակցության Վանաձորի տարածքային բաժնի առաջատար մասնագետի պաշտոնի անձնագրի համաձայն՝ պարտավոր լինելով ուսումնասիրել սոցիալական աջակցություն ստանալու նպատակով դիմած քաղաքացիների սոցիալական ու նյութական պայմանները և կատարել տնային այցելություններ, 2015 թվականի գարնանը, Լոռու մարզի Դեբետ համայնքի համայնքապետարանի երկրորդ կարգի մասնագետ Նորայր Սարգսյանի առաջարկությամբ եկել է հանցավոր համաձայնության՝ հիշյալ համայնքի բնակիչներ՝ Պարույր Ռուբենի Մատինյանից, Արմինե Վաչագանի Սարգսյանից, Երեմ Արարատի Կիրակոսյանից, Գևորգ Գառնիկի Մատինյանից, Աղունիկ Վաղինակի Մանուկյանից և Քնքուշ Սերյոժայի Խառատյանից, Նորայր Սարգսյանի միջոցով, ապօրինի վարձատրություն ստանալու դիմաց նրանց ընտանիքներին իր լիազորությունների շրջանակում ՀՀ կառավարության 2014թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշմամբ սահմանված ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառելու՝ փաստագրելու և նպաստառուների ցուցակներում ընդգրկելու համար:

Այնուհետև՝ Գարիկ Գալստյանի կողմից սոցիալական աջակցության խորհրդի քննարկմանը ներկայացված առաջարկությամբ հիշյալ անձանց ընտանիքներն ընդգրկվել են վերը նշված համակարգում, ստացել ընտանեկան նպաստ, որի դիմաց Նորայր Սարգսյանի միջոցով՝ օժանդակությամբ, Գարիկ Գալստյանն այդ անձանցից 2015 թվականի հուլիսին, Վանաձոր քաղաքում, որպես ապօրինի վարձատրություն ստացել է ընդհանուր 166.000 ՀՀ դրամ գումար:

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Տ.Թադևոսյանը 2016թվականի մարտի 15-ին որոշում է կայացրել Նորայր Սարիբեկի Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38,311[1]-րդ հոդվածի 1-ին մասով և 325-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքը փոփոխել և նրան նոր մեղադրանք առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 38,311[1]-րդ հոդվածի 1-ին մասով և 38,312[1]-րդ հոդվածի 1-ին մասով, այն բանի համար, որ նա 2013 թվականի նոյեմբերի 06-ից Լոռու մարզի Դեբետ համայնքի գյուղապետարանի աշխատակազմի ղեկավարի թիվ 29 հրամանով աշխատելով Լոռու մարզի Դեբետ համայնքի գյուղապետարանի երկրորդ կարգի մասնագետ, 2015 թվականի

զարնանը, հանցավոր համաձայնության է եկել սոցիալական աջակցության Վանաձորի տարածքային բաժնի առաջատար մասնագետ Գարիկ Գալստյանի հետ՝ հիշյալ համայնքի բնակիչներ Պարույր Ռուբենի Մատինյանից, Արմինե Վաչագանի Սարգսյանից, Երեմ Արարատի Կիրակոսյանից, Գևորգ Գառնիկի Մատինյանից, Աղունիկ Վաղինակի Մանուկյանից և Քնքուշ Սերյոժայի Խառատյանից ապօրինի վարձատրություն ստանալու դիմաց վերջիններիս ընտանիքներին Գարիկ Գալստյանի լիազորությունների շրջանակում ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշմամբ սահմանված ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառելու՝ փաստագրելու և նպաստառուների ցուցակներում ընդգրկելու համար:

Այնուհետև՝ Գարիկ Գալստյանի կողմից սոցիալական աջակցության խորհրդի քննարկմանը ներկայացված առաջարկությամբ նշված անձանց ընտանիքներն ընդգրկվել են վերը նշված համակարգում, ստացել ընտանեկան նպաստ, որի դիմաց Նորայր Սարգսյանի միջոցով՝ օժանդակությամբ, Գարիկ Գալստյանը 2015 թվականի հուլիսին, Վանաձոր քաղաքում, որպես ապօրինի վարձատրություն հիշյալ անձանցից ստացել է ընդհանուր 166.000 ՀՀ դրամ գումար, որից 10.000 ՀՀ դրամը տվել է Նորայր Սարգսյանին, որից հետո Գարիկ Գալստյանն ու Նորայր Սարգսյանը պայմանավորվել են այլևս ապօրինի վարձատրություն չվերցնել:

Դրանից հետո՝ 2015 թվականի հոկտեմբերին, Նորայր Սարգսյանը Պարույր Ռուբենի Մատինյանին, Գևորգ Գառնիկի Մատինյանին, Աղունիկ Վաղինակի Մանուկյանին, Լյուդմիլա Սարգսի Հովսեփյանին, Ալինա Ժիրիկի Ավետիքյանին և Սահարգյուլ Մեխակի Գևորգյանին դրդել՝ համոզել է, Գարիկ Գալստյանին տալ ապօրինի վարձատրություն, որպեսզի Պարույր Մատինյանը, Գևորգ Մատինյանը և Աղունիկ Մանուկյանը շարունակեն ստանալ նպաստ, իսկ Լյուդմիլա Հովսեփյանի, Ալինա Ավետիքյանի և Սահարգյուլ Գևորգյանի ընտանիքները Գարիկ Գալստյանի լիազորությունների շրջանակում ՀՀ կառավարության 2014թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշմամբ սահմանված ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառվեն՝ փաստագրվեն և ընդգրկվեն նպաստառուների ցուցակներում: Նույն ժամանակ, վերը նշված անձինք Նորայր Սարգսյանին են տվել ընդհանուր 182.500 ՀՀ դրամ գումար՝ Գարիկ Գալստյանին փոխանցելու համար, որը Վանաձոր քաղաքում Նորայր Սարգսյանը փորձել է փոխանցել Գարիկ Գալստյանին, սակայն վերջինս կամովին հրաժարվել է վերցնել գումարը:

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Տ.Թադևոսյանը 2016թվականի մարտի 25-ին որոշում է կայացրել Սարգիս Գերասիմի Հովսեփյանի, Կորյուն Ցոլակի Նազլուխանյանի և Հովիկ Սերյոժայի Կիրակոսյանի նկատմամբ հանցագործության մասին չհայտնելու դեպքով քրեական հետապնդում չիրականացնել՝ նրանց արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Տ.Թադևոսյանը 2016թվականի մարտի 25-ին որոշում է կայացրել Ռուբեն Արտավազդի Հովսեփյանի, Անուշ Մխիթարի Սարգսյանի նկատմամբ փաստաթղթեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու դեպքով քրեական հետապնդում չիրականացնել՝ նրանց արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Տ.Թադևոսյանը 2016թվականի մարտի 25-ին որոշում է կայացրել մեղադրյալ Պարույր Ռուբենի Մատինյանի նկատմամբ խարդախության և սուտ մատնություն կատարելու դեպքով քրեական հետապնդում չիրականացնել՝ նրա արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Տ.Թադևոսյանը 2016թվականի մարտի 25-ին որոշում է կայացրել վկա Ախրա Բեժանի Պողոսյանի նկատմամբ ապօրինի վարձատրություն տալուն օժանդակելու և սուտ մատնություն կատարելու դեպքով քրեական հետապնդում չիրականացնել՝ նրա արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Տ.Թադևոսյանը 2016թվականի մարտի 25-ին որոշում է կայացրել վկա Մերի Մարատի Մուրադյանի նկատմամբ ապօրինի վարձատրություն տալու և սուտ մատնություն կատարելու դեպքով քրեական հետապնդում չիրականացնել՝ նրա արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Տ.Թադևոսյանը 2016թվականի մարտի 25-ին որոշում է կայացրել Սահարզյուլ Մեխակի Գևորգյանի նկատմամբ ապօրինի վարձատրություն տալու դեպքով քրեական հետապնդում չիրականացնել՝ նրա մահվան հիմքով:

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Տ.Թադևոսյանը 2016թվականի մարտի 25-ին որոշում է կայացրել վկա Թաթուլ Սիրեկանի Գրիգորյանի նկատմամբ ապօրինի վարձատրություն տալու և սուտ մատնություն կատարելու դեպքով քրեական հետապնդում չիրականացնել՝ նրա արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Տ.Թադևոսյանը 2016թվականի մարտի 25-ին որոշում է կայացրել Հովիկ Սերյոժայի Կիրակոսյանի նկատմամբ սուտ մատնություն կատարելու դեպքով քրեական հետապնդում չիրականացնել՝ նրա արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Տ.Թադևոսյանը 2016թվականի մարտի 25-ին որոշում է կայացրել Նորայր Սարիբեկի Սարգսյանի նկատմամբ փաստաթուղթ կեղծելու և պաշտոնեական կեղծիք կատարելու դեպքով քրեական հետապնդում չիրականացնել՝ նրա արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Տ.Թադևոսյանը 2016թվականի մարտի 26-ին որոշում է կայացրել Սամվել Սուրենի Մկրտչյանի նկատմամբ փաստաթուղթ կեղծելու դեպքով քրեական հետապնդում չիրականացնել՝ նրա արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Տ.Թադևոսյանը 2016թվականի մարտի 26-ին որոշում է կայացրել Կարեն Գրիգորի Գրիգորյանի և Կարեն Վրեժի Պողոսյանի նկատմամբ ապօրինի վարձատրություն ստանալու դեպքով քրեական հետապնդում չիրականացնել՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

Մեղադրող-դատախազը 2016թվականի ապրիլի 04-ին որոշում է կայացրել հաստատել թիվ 33104715 քրեական գործով մեղադրական եզրակացությունը:

2016թվականի ապրիլի 04-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

Մինչ դատաքննությունն սկսելը, ամբաստանյալներ Գարիկ Վոլոդի Գալստյանը, Նորայր Սարիբեկի Սարգսյանը, Արմինե Վաչագանի Սարգսյանը, Պարույր Ռուբենի Մարտինյանը, Երեմ Արարատի Կիրակոսյանը, Գևորգ Գառնիկի Մարտինյանը, Աղասիկ Վարդանի Մանուկյանը, Լյուդմիլա Սարգսի Հովսեփյանը, Քնքուշ Սերյոժայի Խառատյանը և Միխա Ժիրիկի Ավետիքյանը միջնորդեցին դատական քննությունն անցկացնել արագացված

կարգով և հայտարարեցին, որ միջնորդությունը ներկայացրել են կամավոր, խորհրդակցել են պաշտպանի հետ, գիտակցում են արագացված կարգով դատաքննություն անցկացնելու հետևանքները, առաջադրված մեղադրանքն իրենց պարզ է, համաձայն են մեղադրանքի հետ:

2016թվականի ապրիլի 04-ի „թիվ 33104715 քրեական գործով մեղադրական եզրակացությունը հաստատելու մասին" որոշումով մեղադրող-դատախազն առարկել է դատաքննության արագացված կարգ կիրառելու դեմ, սակայն դատական նիստում մեղադրող-դատախազը փոխեց դիրքորոշումը, հայտնելով, որ չի առարկում արագացված դատական քննության կարգ կիրառելու դեմ:

Դատարանը համոզվելով, որ առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375¹-րդ և 375²-րդ հոդվածներով նախատեսված պայմանները, որոշում է կայացրել արագացված կարգով դատական քննություն անցկացնելու մասին:

Դատարանը հիմք ընդունելով մեղադրանքի հիմքում դրված ապացույցները, գտնում է, որ ամբաստանյալ Գարիկ Վռամի Գալստյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 311¹-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք, ամբաստանյալ Նորայր Սարիբեկի Սարգսյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 38,311¹-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 38,312¹-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքներ, ամբաստանյալներ՝ Արմինե Վաչագանի Սարգսյանը, Պարույր Ռուբենի Մատինյանը, Երեմ Արարատի Կիրակոսյանը, Գևորգ Գառնիկի Մատինյանը, Աղունիկ Վաղինակի Մանուկյանը, Լյուդմիլա Սարգսի Հովսեփյանը, Քնքուշ Սերյոժայի Խառատյանը և Ալինա Ժիրիկի Ավետիքյանը կատարել են ՀՀ քրեական օրենսգրքի 312¹-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք:

ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները:

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի համաձայն՝ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի ընդհանուր մասի դրույթները:

Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով:

Պատիժ սահմանելիս դատարանը, որպես Գարիկ Վռամի Գալստյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է դիտում այն, որ առաջադրված մեղադրանքում լիովին մեղավոր է ճանաչել, զղջում է կատարածի համար, նախկինում դատապարտված չի եղել, բնութագրվում է դրական, խնամքին է գտնվում 21.09.2013թվականին ծնված տղան՝ Էրիկ Գարիկի Գալստյանը, վատառողջ է, վերջինիս մոտ ախտորոշվել է պարբերական հիվանդություն և, որ երրորդ խմբի հաշմանդամ է:

Պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

Պատիժ սահմանելիս դատարանը, որպես Նորայր Սարիբեկի Սարգսյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է դիտում այն, որ առաջադրված մեղադրանքում լիովին մեղավոր է ճանաչել, զղջում է կատարածի համար, նախկինում դատապարտված չի եղել, բնութագրվում է դրական և, որ պարգևատրվել է ,,ԵԿՄ 20 տարի" հոբելյանական մեդալով ու ,,Հայկական Կարիտաս" ԲՀԿ-ի կողմից տրվել է շնորհակալագիր:

Պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

Պատիժ սահմանելիս դատարանը, որպես Գևորգ Գառնիկի Մատինյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է դիտում այն, որ առաջադրված մեղադրանքում լիովին մեղավոր է ճանաչել, զղջում է կատարածի համար, նախկինում դատապարտված չի եղել, բնութագրվում է դրական և, որ խնամքին են գտնվում երկու տղաները՝ 30.09.1998թ. ծնված Նվեր Գևորգի Մատինյանը և 08.01.2001թ. ծնված Գառնիկ Գևորգի Մատինյանը:

Պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

Պատիժ սահմանելիս դատարանը, որպես Երեմ Արարատի Կիրակոսյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է դիտում այն, որ առաջադրված մեղադրանքում լիովին մեղավոր է ճանաչել, զղջում է կատարածի համար, նախկինում դատապարտված չի եղել, բնութագրվում է դրական և, որ խնամքին են գտնվում 25.11.1998թ. ծնված աղջիկը՝ Մելինե Երեմի Կիրակոսյանը և 08.06.2001թ. ծնված տղան՝ Արարատ Երեմի Կիրակոսյանը:

Պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

Պատիժ սահմանելիս դատարանը, որպես Քնքուշ Սերյոժայի Խառատյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է դիտում այն, որ առաջադրված մեղադրանքում լիովին մեղավոր է ճանաչել, զղջում է կատարածի համար, նախկինում դատապարտված չի եղել և, որ բնութագրվում է դրական:

Պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

Պատիժ սահմանելիս դատարանը, որպես Պարույր Ռուբենի Մատինյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է դիտում այն, որ առաջադրված մեղադրանքում լիովին մեղավոր է ճանաչել, զղջում է կատարածի համար, նախկինում դատապարտված չի եղել, բնութագրվում է դրական և, որ խնամքին են գտնվում երկու տղաները՝ 22.02.2005թ. ծնված Սևակ Պարույրի Մատինյանը և 19.02.2008թ. ծնված Նարեկ Պարույրի Մատինյանը:

Պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

Պատիժ սահմանելիս դատարանը, որպես Արմինե Վաչագանի Սարգսյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է դիտում այն, որ առաջադրված մեղադրանքում լիովին մեղավոր է ճանաչել, զղջում է կատարածի համար, նախկինում դատապարտված չի եղել, բնութագրվում է դրական և, որ խնամքին է գտնվում 22.05.2009թ. ծնված տղան՝ Ռոման Ռաֆայելի Գույլանը:

Պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

Պատիժ սահմանելիս դատարանը, որպես Լյուդմիլա Սարգսի Հովսեփյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է դիտում այն, որ առաջադրված մեղադրանքում լիովին մեղավոր է ճանաչել, զղջում է կատարածի համար, նախկինում դատապարտված չի եղել, բնութագրվում է դրական և, որ խնամքին է գտնվում 18.08.2000թ. ծնված աղջիկը՝ Սիրանուշ Կորյունի Նազլուխանյանը:

Պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

Պատիժ սահմանելիս դատարանը, որպես Ալինա Ժիրիկի Ավետիքյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է դիտում այն, որ առաջադրված մեղադրանքում լիովին մեղավոր է ճանաչել, զղջում է կատարածի համար, նախկինում դատապարտված չի եղել, բնութագրվում է դրական և, որ խնամքին են գտնվում 04.03.2002թ. ծնված տղան՝ Սեյրան Հովիկի Կիրակոսյանը և 02.06.2005թ. ծնված աղջիկը՝ Սյուզի Հովիկի Կիրակոսյանը:

Պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

Պատիժ սահմանելիս դատարանը, որպես Աղունիկ Վաղինակի Մանուկյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է դիտում այն, որ առաջադրված մեղադրանքում լիովին մեղավոր է ճանաչել, զղջում է կատարածի համար, նախկինում դատապարտված չի եղել, վատառողջ է՝ գերձայնային ախտորոշումով խորհուրդ է տրվել դինամիկ հսկողություն և, որ բնութագրվում է դրական:

Պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

Հաշվի առնելով ամբաստանյալների կատարած հանցավոր արարքի հանրության համար վտանգավորության աստիճանը, նրանց անձը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները, ու հիմք ընդունելով ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին, 48-րդ հոդվածի 2-րդ մասերի և 61-րդ հոդվածի պահանջները, դատարանը գտնում է, որ Գարիկ Վռամի Գալստյանն իր կատարած ՀՀ քրեական օրենսգրքի 311[1]-րդ հոդվածի 1-ին մասով, նախատեսված հանցագործության համար, Նորայր Սարիբեկի Սարգսյանն իր կատարած՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38,311[1]-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 38,312[1]-րդ հոդվածի 1-ին մասով, նախատեսված հանցագործությունների համար, Արմինե Վաչագանի Սարգսյանն իր կատարած ՀՀ քրեական օրենսգրքի 312[1]-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության համար, Պարույր Ռուբենի Մատինյանը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 312[1]-րդ հոդվածի 1-ին մասով, Երեմ Արարատի Կիրակոսյան՝ ՀՀ քրեական օրենսգրքի 312[1]-րդ հոդվածի 1-ին մասով, Գևորգ Գառնիկի Մատինյանը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 312[1]-րդ հոդվածի 1-ին մասով, Աղունիկ Վաղինակի Մանուկյանը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 312[1]-րդ հոդվածի 1-ին մասով, Լյուդմիլա Սարգսի Հովսեփյանը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 312[1]-րդ հոդվածի 1-ին մասով, Քնքուշ Սերյոժայի Խառատյանը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 312[1]-րդ հոդվածի 1-ին մասով և Ալինա Ժիրիկի Ավետիքյանը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 312[1]-րդ հոդվածի 1-ին մասով, նախատեսված հանցագործության համար ենթակա են պատժի՝ տուգանքի ձևով, ինչը բավարար է նրանց ուղղելու, նոր հանցանքի կատարումը կանխելու և սոցիալական արդարությունը վերականգնելու համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գարիկ Վռամի Գալստյանը նախաքննության ընթացքում, 2015թվականի նոյեմբերի 26-ից մինչև 2015թվականի նոյեմբերի 29-ը՝ երեք օր, եղել է անազատության մեջ, դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի կարգով, պատիժը պետք է մեղմացնել:

ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է.

,,Մինչև դատական քննությունը կալանքի տակ գտնվող անձի նկատմամբ տուգանքի, (...) ձևով պատիժ նշանակելիս դատարանը, հաշվի առնելով կալանքի տակ պահելու ժամկետը, մեղմացնում է նշանակված պատիժը կամ լրիվ ազատում պատիժը կրելուց":

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ամբաստանյալներն ի վիճակի չեն ամբողջությամբ և անհապաղ վճարելու նշանակված տուգանքը, դատարանը գտնում է, որ նշանակված տուգանքի վճարումը պետք է տարաժամկետել ՀՀ քրեական օրենսգրքի 51 հոդվածի 3-րդ մասի համաձայն:

Դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Գարիկ Վռամի Գալստյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ գրավը, պետք է թողնել անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը, այնուհետև այն պետք է վերադարձվի գրավատուին:

Ամբաստանյալներ՝Նորայր Սարիբեկի Սարգսյանի, Արմինե Վաչագանի Սարգսյանի, Պարույր Ռուբենի Մատինյանի, Երեմ Արարատի Կիրակոսյանի, Գևորգ Գառնիկի Մատինյանի, Աղունիկ Վաղինակի Մանուկյանի, Լյուդմիլա Սարգսի Հովսեփյանի, Քնքուշ Սերյոժայի Խառատյանի և Ալինա Ժիրիկի Ավետիքյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ստորագրություն չհեռանալու մասին, պետք է թողնել անփոփոխ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Դատարանը գտնում է, որ Գարիկ Վռամի Գալստյանի ու Նորայր Սարիբեկի Սարգսյանի անշարժ և շարժական գույքի վրա դրված կալանքները՝ պետք է վերացնել:

Դատարանն անդրադառնալով Սոցիալական աջակցության Վանաձորի տարածքային բաժնի առաջատար մասնագետ Գարիկ Վռամի Գալստյանի և Լոռու մարզի Դեբետ համայնքի համայնքապետարանի երկրորդ կարգի մասնագետ Նորայր Սարիբեկի Սարգսյանի պաշտոնավարությունները ժամանակավորապես դադարեցնելու հարցին, գտնում է, որ դրանք պետք է վերացնել:

Քննության առնելով ապացույցների տնօրինման հարցը, դատարանը գտնում է, որ որպես ապացույց ճանաչված Գարիկ Գալստյանի 091746431 և 095747434 բջջային հեռախոսահամարների վերծանումների վերաբերյալ սկավառակը, ,,Արտաքին դիտում" օպերատիվ-հետախուզական միջոցառման սկավառակը, սոցիալական աջակցության Վանաձորի տարածքային բաժնից առգրավված նպաստի գործերում առկա տնային այցելությունների վերաբերյալ կազմված արձանագրությունները, Լոռու մարզպետարանի համապատասխան աշխատակիցների կողմից տրված մասնագիտական եզրակացությունները, պետք է թողնել քրեական գործին կից:

Վերոգրյալի հիման վրա ու ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 357-360, $375^{3}$ հոդվածներով դատարանը

## Վ Ճ Ռ Ե Ց

<u>Գարիկ Վռամի Գալստյանին</u> մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի $311^{1}$-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտել տուգանքի Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի՝ 300.000/երեք հարյուր հազար/ դրամի չափով:

Նկատի ունենալով, որ Գարիկ Վռամի Գալստյանը նախաքննության ընթացքում երեք օր եղել է անազատության մեջ՝ 2015թվականի նոյեմբերի 26-ից մինչև 2015թվականի նոյեմբերի 29-ը, ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 5-րդ մասով, պատիժը մեղմացնել 50.000 ՀՀ դրամի չափով և վերջնական պատիժ սահմանել 250.000/երկու հարյուր հիսուն հազար/ դրամի չափով:

ՀՀ քրեական օրենսգրքի 51 հոդվածի 3-րդ մասի կարգով՝ տուգանքի վճարումը տարաժամկետել և վճարման համար սահմանել 10 /տաս/ ամիս ժամանակ, յուրաքանչյուր ամիս բռնագանձելով 25.000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամի չափով:

Խափանման միջոց գրավը թողնել անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը, որից հետո գրավի գումարը վերադարձնել գրավատուին:

Գարիկ Վռամի Գալստյանի անշարժ և շարժական գույքի վրա դրված կալանքը՝ վերացնել:

Սոցիալական աջակցության Վանաձորի տարածքային բաժնի առաջատար մասնագետ Գարիկ Վռամի Գալստյանի պաշտոնավարությունը ժամանակավորապես դադարեցնելը՝ վերացնել:

Նորայր Սարիբեկի Սարգսյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 38,311[1]-րդ հոդվածի 1-ին մասով և 38,312[1]-րդ հոդվածի 1-ին մասով:

ՀՀ քրեական օրենսգրքի 38,311[1]-րդ հոդվածի 1-ին մասով դատապարտել տուգանքի Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200.000/երկու հարյուր հազար/ դրամի չափով:

ՀՀ քրեական օրենսգրքի 38,312[1]-րդ հոդվածի 1-ին մասով դատապարտել տուգանքի Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200.000/երկու հարյուր հազար/ դրամի չափով:

ՀՀ քրեական օրենսգրքի 66 հոդվածի կարգով՝ պատիժները մասնակիորեն գումարելու սկզբունքով, ՀՀ քրեական օրենսգրքի 38,311[1]-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված 200.000/երկու հարյուր հազար/ դրամի չափով տուգանքի ձևով պատժին մասնակիորեն գումարել ՀՀ քրեական օրենսգրքի 38,312[1]-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված 200.000/երկու հարյուր հազար/ դրամ տուգանքից 100.000/մեկ հարյուր հազար/ դրամը և վերջնական պատիժ սահմանել տուգանք 300.000/երեք հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով:

ՀՀ քրեական օրենսգրքի 51 հոդվածի 3-րդ մասի կարգով՝ տուգանքի վճարումը տարաժամկետել և վճարման համար սահմանել 10 /տաս/ ամիս ժամանակ, յուրաքանչյուր ամիս բռնագանձելով 30.000 /երեսուն հազար/ ՀՀ դրամի չափով:

Նորայր Սարիբեկի Սարգսյանի անշարժ և շարժական գույքի վրա դրված կալանքը՝ վերացնել:

Լոռու մարզի Դեբետ համայնքի համայնքապետարանի երկրորդ կարգի մասնագետ Նորայր Սարիբեկի Սարգսյանի պաշտոնավարությունը ժամանակավորապես դադարեցնելը՝ վերացնել:

Արմինե Վաչագանի Սարգսյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 312[1]-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտել տուգանքի Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200.000/երկու հարյուր հազար/ դրամի չափով:

ՀՀ քրեական օրենսգրքի 51 հոդվածի 3-րդ մասի կարգով՝ տուգանքի վճարումը տարաժամկետել և վճարման համար սահմանել 10 /տաս/ ամիս ժամանակ, յուրաքանչյուր ամիս բռնագանձելով 20.000 /քսան հազար/ ՀՀ դրամի չափով:

Խափանման միջոցը՝ ,,Ստորագրություն չհեռանալու մասին", թողնել անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Քնքուշ Սերյոժայի Խառատյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 312[1]-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտել տուգանքի Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200.000/երկու հարյուր հազար/ դրամի չափով:

ՀՀ քրեական օրենսգրքի 51 հոդվածի 3-րդ մասի կարգով՝ տուգանքի վճարումը տարաժամկետել և վճարման համար սահմանել 10 /տաս/ ամիս ժամանակ, յուրաքանչյուր ամիս բռնագանձելով 20.000 /քսան հազար/ ՀՀ դրամի չափով:

Խափանման միջոցը՝ ,,Ստորագրություն չհեռանալու մասին", թողնել անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Պարույր Ռուբենի Մատինյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 312[1]-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտել տուգանքի Հայաստանի Հանրապետությունում

սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200.000/երկու հարյուր հազար/ դրամի չափով:

ՀՀ քրեական օրենսգրքի 51 հոդվածի 3-րդ մասի կարգով՝ տուգանքի վճարումը տարաժամկետել և վճարման համար սահմանել 10 /տաս/ ամիս ժամանակ, յուրաքանչյուր ամիս բռնագանձելով 20.000 /քսան հազար/ ՀՀ դրամի չափով:

Խափանման միջոցը՝ ,,Ստորագրություն չհեռանալու մասին", թողնել անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Երեմ Արարատի Կիրակոսյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 312¹-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտել տուգանքի Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200.000/երկու հարյուր հազար/ դրամի չափով:

ՀՀ քրեական օրենսգրքի 51 հոդվածի 3-րդ մասի կարգով՝ տուգանքի վճարումը տարաժամկետել և վճարման համար սահմանել 10 /տաս/ ամիս ժամանակ, յուրաքանչյուր ամիս բռնագանձելով 20.000 /քսան հազար/ ՀՀ դրամի չափով:

Խափանման միջոցը՝ ,,Ստորագրություն չհեռանալու մասին", թողնել անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Գևորգ Գառնիկի Մատինյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 312¹-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտել տուգանքի Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200.000/երկու հարյուր հազար/ դրամի չափով:

ՀՀ քրեական օրենսգրքի 51 հոդվածի 3-րդ մասի կարգով՝ տուգանքի վճարումը տարաժամկետել և վճարման համար սահմանել 10 /տաս/ ամիս ժամանակ, յուրաքանչյուր ամիս բռնագանձելով 20.000 /քսան հազար/ ՀՀ դրամի չափով:

Խափանման միջոցը՝ ,,Ստորագրություն չհեռանալու մասին", թողնել անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Աղունիկ Վաղինակի Մանուկյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 312¹-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտել տուգանքի Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200.000/երկու հարյուր հազար/ դրամի չափով:

ՀՀ քրեական օրենսգրքի 51 հոդվածի 3-րդ մասի կարգով՝ տուգանքի վճարումը տարաժամկետել և վճարման համար սահմանել 10 /տաս/ ամիս ժամանակ, յուրաքանչյուր ամիս բռնագանձելով 20.000 /քսան հազար/ ՀՀ դրամի չափով:

Խափանման միջոցը՝ ,,Ստորագրություն չհեռանալու մասին", թողնել անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Լյուդմիլա Սարգսի Հովսեփյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 312¹-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտել տուգանքի Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200.000/երկու հարյուր հազար/ դրամի չափով:

ՀՀ քրեական օրենսգրքի 51 հոդվածի 3-րդ մասի կարգով՝ տուգանքի վճարումը տարաժամկետել և վճարման համար սահմանել 10 /տաս/ ամիս ժամանակ, յուրաքանչյուր ամիս բռնագանձելով 20.000 /քսան հազար/ ՀՀ դրամի չափով:

Խափանման միջոցը՝ ,,Ստորագրություն չհեռանալու մասին", թողնել անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Ալինա Ժիրիկի Ավետիքյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 312₁-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտել տուգանքի Հայաստանի Հանրապետությունում

սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի` 200.000/երկու հարյուր հազար/ դրամի չափով:

ՀՀ քրեական օրենսգրքի 51 հոդվածի 3-րդ մասի կարգով` տուգանքի վճարումը տարաժամկետել և վճարման համար սահմանել 10 /տաս/ ամիս ժամանակ, յուրաքանչյուր ամիս բռնագանձելով 20.000 /քսան հազար/ ՀՀ դրամի չափով:

Խափանման միջոցը` ,,Ստորագրություն չհեռանալու մասին", թողնել անփոփոխ` մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Որպես ապացույց ճանաչված Գարիկ Գալստյանի 091746431 և 095747434 բջջային հեռախոսահամարների վերծանումների վերաբերյալ սկավառակը, ,,Արտաքին դիտում" օպերատիվ-հետախուզական միջոցառման սկավառակը, սոցիալական աջակցության Վանաձորի տարածքային բաժնից առգրավված նպաստի գործերում առկա տնային այցելությունների վերաբերյալ կազմված արձանագրությունները, Լոռու մարզպետարանի համապատասխան աշխատակիցների կողմից տրված մասնագիտական եզրակացությունները, թողնել քրեական գործին կից:

Գարիկ Վռամի Գալստյանի անձնական խուզարկությամբ վերցված իրերը` վերադարձնել վերջինիս:

Նորայր Սարիբեկի Սարգսյանի անձնական խուզարկությամբ վերցված իրերը` վերադարձնել վերջինիս:

Դատավճիռը կարող է բողոքարկվել ՀՀ Վերաքննիչ քրեական դատարան` հրապարակման պահից մեկամյա ժամկետում, բացի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395 հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմքի:

ԴԱՏԱՎՈՐ _______________ Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ծանոթություն.

Սույն գործով վերաքննիչ բողոք չի ներկայացվել և դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ 2016թվականի մայիսի 26-ին:

ԴԱՏԱՎՈՐ _______________ Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ